

## Հաշվետվություն

«Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» ծրագրի շրջանակներում «Առևտիզմ ազգային հիմնադրամի» կողմից «Առևտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծառայությունների» շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ (2019 թվական)

ԿԵՆՏՐՈՆՈՒԲ ՌԵԲԱՊԻԱ ՍՏԱՅՈՂ ԾԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԻ ԱՍԲՈՂՁ 2019 ՏԱՐՎԱ ԿՏՐՎԱԾՔՈՎ

- 2019 թվականի ընթացքում կենտրոնը ծառայություններ է մատուցել 1-12 և 12 և բարձր տարիքի 182 շահառուի:
- 1-12 տարեկան 92 շահառու, 12 և բարձր- 90 շահառու

**Ամփոփելով 2019 թվականին իրականացված ծրագրերը՝ մենք արձանագրել ենք հետևյալ արդյունքները.**

### **1. Վարքի փոփոխման նպատակով շրջակա միջավայրի իրադարձությունների մոդիֆիկացում և ադապտացիա:**

- Հիմնական մեթոդը, որը կիրառվում է կենտրոնում, Կիրառական Վարքային Վերլուծությունն է (ԿՎՎ (ABA)): Այն հիմնված է գիտական սկզբունքների հիման վրա ոչ ադապտիվ վարքի գնահատման և շտկման, ինչպես նաև խոսք, ակադեմիական և կենսական հմտություններ ուսուցանելու վրա: ԿՎՎ-ը շեշտը դնում է շրջակա միջավայրի իրադարձությունների **փոփոխման/ մոդիֆիկացիայի վրա**, ապա դիտարկվող երևույթների տվյալները **հավաքագրվում են և վերլուծվում:**
- ԿՎՎ (ABA) թերապիայի ամենից տարածված մեթոդներից է DTT-ն: Յուրաքանչյուր հմտություն բաժանվում է ամենափոքր մասերի և անհատապես սովորեցվում է: Երեխան սկսում է փոքր հմտությունների յուրացումից աստիճանաբար ավելի բարդերի յուրացմանը, քանի որ յուրաքանչյուր նախորդ փոքրիկ հմտություն հաջորդի հիմքն է հանդիսանում:
- Հիմք ընդունելով *VB-MAPP Language Milestones and Barriers Assessment-ը, խոսքային ցուցանիշները և խոչընդոտների գնահատումը՝* յուրաքանչյուր երեխայի համար մշակվում և կազմվում է անհատական ծրագիր: Վեցամիսե տոներեխաները վերագնահատվում են, որի արդյունքում գրանցվում են բոլոր ոլորտներում ունեցած առաջընթացները, և դրվում են նոր երկարաժամկետ և կաճաժամկետ նպատակադրումներ:


Ամփոփելով 2019 թվականի տարվա կտրվածքով արձանագրված միջինացված տվյալները՝ 92 շահառուների մոտ մենք արձանագրել ենք հետևյալ արդյունքները.

1) **Mand-ը** մի շատ կարևոր վերբալ օպերանտ է. **պահանջ, հրաման, խնդրանք** կամ **հարցադրում:**

2019 թվականին յուրաքանչյուր երեխայի համար դրված կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակադրումների արդյունքները ամփոփելով ունենք հետևյալ միջինացված հաղթահարած փուլերը՝

Ամփոփելով երեխաների համար կազմված անհատական ծրագրերի միջինացված արդյունքները ստորեվ ներկայացրել ենք երեխաների զարգացման առաջընթացի համառոտ վերլուծությունը յուրաքանչյուր տիրույթում:

- Երեխաների 30 %-ը սովորել են ժեստով ուզել, մատով ցույց տալ կամ համապատասխան նկարը պոկել և տալ մասնագետին, երբ որևէ բան են ցանկանում առանց ֆիզիկական, echoic, կամ իմիտացիոն հուշման, բացառությամբ բանավոր հուշման (օրինակ, «Ի՞նչ ես ուզում»):
  - Երեխաների 28%-ը կարողանում են խնդրել իրենց համար ցանկալի տարբեր առարկաներ կամ գործողություններ՝ առանց դրանք տեսնելու, օգտագործելով 1 կամ 2 բառ: Օր՝ մատիտ տուր, ջուր տուր, կարելի՞ է վերցնել ինչ-որ առարկա:
  - Երեխաների 38%-ը այժմ կարողանում են ճիշտ ձևով հրաժարվել իրենց համար անցանկալի գործողությունից, սննդից կամ այլ ոչ հաճելի իրավիճակից;
  - Երեխաների 20%-ը կարողանում են դիմել (մեկ բառով) մյուսներին որպեսզի գրավեն նրանց ուշադրությունը՝ տես, նայի, արի, ես ասեցի...
- Երեխաների 18%-ը կարողանում են հարցեր տալ այլ մարդկանց իրենց ցանկությունները բավարարելու և կատարելու համար
- **Երեխաների մեծամասնությունը դեռ դժվարանում են տալ ուղղություն, ցուցումներ, բացատրություն թե ինչպես անել այս կամ այն բանը կամ ինչպես մասնակցել այս կամ այն գործողությանը:**



**2)Տակտ** (կոնտակտ) - նշանակում է մտնել կոնտակտի, շփման մեջ շրջակա միջավայրի հետ մեր զգայարաններից որևէ մեկի միջոցով:


Առաջին կիսամյակի ընթացքում երեխաների մոտ արձանագրվել են հետևյալ արդյունքները՝

2019 թվականին արձանանագրված միջինացված արդյունքները հետևյալն են՝

- Երեխաների 50%-ը ինքնուրույն կամ թեթև հուշումով կարողանում են մեկ բառով անվանել այն, ինչ նրանք տեսնում են, լսում են, հոտն են զգում, շոշափում են կամ համտեսում են:
- Երեխաներից 25%-ը երկու բառով կարողանում են պատասխանել մասնագետի հարցին «Ի՞նչ է սա» երբ մասնագետը ցույց է տալիս համապատասխան նկարը կամ առարկան:
- Սաների 30%-ը տոկոսը կարողանում են անվանել առարկաների գույները, ձևերը և ֆունկցիաները:
- Երեխաների 24%-ը տոկոսը կարողանում են անվանել ամբողջական նախադասությամբ՝ «Սա կարմիր մեքենա է»:
- Երեխաների 15%-ը սովորել են անվանել դիմացիկ կատարած գործողությունները՝ ինչպես նաև տեսնելով համապատասխան նկարներ՝ անվանել գոյական-բայ

համադրությամբ նախադասություններ, այսինքն նկարը նկարագրել պարզ համառոտ նախադասությամբ: Օր՝ Աղջիկը լողանում է:


- Երեխաների մեծամասնությունը նեռ դժվարանում են անվանել այն գործողությունը որը կատարում է այլ մարդ:
- Դժվարանում են նաև անվանել երկու բաղադրիչից կազմված գոյական-բայ կամ բայ-գոյական:



**3) Listener skills** (բառերի և հրահանգների ընկալում և կատարում): «Ռեցեպտիվ խոսքը» ներառում է այլ մարդկանց խնդրանքներին արձագանքելը:

«Ռեցեպտիվ խոսքը» ներառում է այլ մարդկանց խնդրանքներին արձագանքելը: 2019 թվականին արձանանագրված միջինացված արդյունքները հետևյալն են՝

- Բոլոր երեխաները այժմ արձագանքում են իրենց անվանը;
- Երեխաների 60%-ը կարողանում է մատնանշել ճիշտ նկարը տարբեր գրքերի մեջ;
- Երեխաների 80%-ը կարողանում են առանձին դրված քարտերի միջից գտնել համապատասխան նկարը
- Երեխաների 55-ը այժմ կարողանում են բնական միջավայրում մատնանշել տարբեր առարկաներ, իրեր և այլն:
- Երեխաներից 54-ը միաժամանակ սեղանին դրված 6 տարբեր նկարներից կարողանում են մատնանշել և դասակարգել իրերը ըստ գույնի և ձևի :
- Երեխաների 55%-ը ըստ հրահանգի կարողանում են մատնանշել գործողություն կատարող խառը դրված 8 քարտերի շարքում, գրքերում և շրջապատող միջավայրում:
- Երեխաների 40%-ը արդեն կարողանում են կատարել 3 բայից բաղկացած 10-ից ավելի գործողություններ:
- Երեխաների 35%-ը արդեն կարողանում են մատնանշել 200-ից ավել առարկաներ և նկարներ խառը դրված 8 -10 առարկաների կամ նկարների շարքում, ինչպես նաև կարողանում է ցույց տալ դրանք գրքերում և շրջապատող միջավայրում:




#### 4) Visual perceptual skills and matching-to-sample (VP-MTS) (Տեսողական ընկալման հմտություններ և համադրում)

Աշխատանքի ընթացքում երեխաները սկսում են տարբերակել իրերը՝ համեմատելով նմանություններն ու տարբերությունները: Նրանք սովորում են համապատասխանեցնել իրերը այլ իրերի հետ, որը տեսել են նախկինում:

2019 թվականին արձանագրված արդյունքները հետևյալն են.


- Երեխաները սովորել են համադրել ցանկացած պատկերի մասնիկ այլ մարդկանց մոտ եղած նմանատիպ նմուշի հետ
- Երեխաների 72%-ը կարողանում են 4-6 բլոկներով կառուցել տարբեր պատկերներ և հավաքել պարզ փազլներ:
- Երեխաների 50%-ը կարողանում են հավաքել բարդ կառույցներ ըստ նախնական մոդելի:
- 15%-ը արդեն կարողանում են շարունակել 3 քայլից բաղկացած պատկերները ըստ հաջորդականության՝ աստղ, շրջան, քառակուսի... աստղ, շրջան, քառակուսի:
- 22 %-ը ինքնուրույն առանց հուշման կարողանում են սորտավորել 5 տարբեր կատեգորիայի/կարգի պատկանող տարրեր առանց նախնական մոդելի:



#### 5) Imitation (Իմիտացիա): Նմանակումը մեկ այլ հմտություն է, որը նպաստում է վերբալ վարքի ձևավորմանը: Իմիտացիան, ընդհանուր առմամբ, ներառում է այլ անձի շարժումների պատճենահանում:

2019 թվականին արձանագրված արդյունքները հետևյալն են.

- Երեխաները կարողանում են նմանակել մինչև 50 պարզ խոշոր մոտորիկայի շարժումներ:
- Կարողանում են նմանակել տարբեր պարզ գործողություններ առարկաներով:
- Երեխաների 68%-ը ինքնուրույն կամ թեթև հուշումով կարողանում են, նմանակելով թերապիստին, կատարել 20-ից ավելի տարբեր տեսակի երկքայլ գործողություններ:
- Երեխաներից 48%-ը արդեն կարողանում են, նմանակելով թերապիստին, կատարել 18 տարբեր տեսակի եռաքայլ գործողություններ:



## 6. Խոսքի ընկալունակության և զարգացման վաղ միջամտությունը աուտիզմ համախտանիշ ունեցող երեխաների մոտ:

Կենտրոնում իրականացվող խոսքային թերապիան իր մեջ ներառում է՝

- խոսքի ըմբռնում/ընկալում,
- հնչյունի արտաբերում,
- արտահայտչականություն,
- խոսքի սոցիալական կիրառում,
- ոչ խոսքային հաղորդակցություն (ժեստային հաղորդակցություն, PODD և PECS համակարգեր):

Երեխաների ոկալ իմիտացիոն համակարգը գնահատվում է VB-MAPP- ի «Վաղ Էքոիկ հմտությունների գնահատման» (EESA) թեստի միջոցով (Sundberg, 2008):

2019 թվականին արձանագրված արդյունքները հետևյալն են.

- Երեխաների 40%-ը արդեն կարողանում են արտաբերել 12-15 միավանկ բառեր, 30%-ը արտաբերում է երկվանկ բառեր՝ կրկնելով թերապիստին իսկ 18%-ը կարողանում է հստակ արտաբերել հնչարտաբերմամբ պարզ եռավանկ բառեր՝ կրկնելով թերապիստին:
- Ծրագրի շրջանակներում երեխաները սովորում են հասկանալ նաև դիմացինի հույզերը համապատասխան իրավիճակներում, սովորում են շարունակել ոտանավորներ, մանկական երգեր, ինչպես նաև որոշակի կենցաղային արտահայտություններ:
- Սաների 35%-ը թեթև հուշմամբ կարողանում են պատասխանել «ի՞նչ», «որտեղ», «ե՞րբ» հարցերին: Օր՝ անունդ ի՞նչէ, որտե՞ղ ես ապրում և այլն:

Երեխաները հաճախ դժվարանում են պատմել, սկարագրել այն երևույթները ինչը նրանք տեսել են կամ լսել՝ դժվարանում են պատմել լսած հեքիաթը, կամ մուլտֆիլմը...

## 7. Պատկերների Փոխանակման Հաղորդակցման համակարգի PECS կիրառումը բոլոր միջավայրերում

Նկարների փոխանակմամբ հաղորդակցման համակարգը՝ PECS-ը, այլընտրանքային հաղորդակցման միջոցներից է:

PECS-ը հնարավորություն է տալիս երեխային դրդել ինքնուրույնության ու նախաձեռնության, նրա մոտ ձևավորել ֆունկցիոնալ հաղորդակցման հմտություններ և խոսք: PECS-ը կարող է հանդես գալ որպես՝ հաղորդակցմանն օգնող, այլընտրանքային ժամանակավոր միջոց, քանի դեռ չի ձևավորվել բանավոր խոսքը կամ հանդիսանալ հաղորդակցման միակ հնարավոր եղանակ, որը կփոխարինի և կօգնի շփվել և լինել հասկացված ամբողջ կյանքի ընթացքում:

Ծրագրում ընդգրկված են եղել 40 շահառու: Ծրագրում ընդգրկված երեխաներից 10-ը ինքնախթանման վարքերի և թղթի հանդեպ հակվածություն ունենալու պատճառով ծրագիրը չեն կարողացել հաղթահարել և PECS-ը փոխարինվել է PODD համակարգով:

Մյուս երեխաների մոտ միջինացված արդյունքների ամփոփիչ տվյալները հետևյալն են՝

- Սաներից 25-ը հաղթահարել են PECS-ի առաջին փուլը՝ այժմ կատարում են պարզ փոխանակում. Տալիս են նկար/պատկեր և ստանում համապատասխան նախընտրելի առարկան:

- 25 երեխաներից 7-ը հաղթահարել են նաև PECS-ի երկրորդ փուլը՝ երեխաները վերցնում են նկարը/պատկերը, մոտենում մասնագետին, նրա ուշադրությունը հրավիրում են իրենց վրան և կատարում փոխանակում:
- 30 սաներից 14-ը դեռ չեն կարողանում հաղթահարել PECS-ի երրորդ փուլը սակայն ունեն դանդաղ բայց կայուն առաջընթաց:

## **2. Երաժշտությունը որպես աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների ինքնարտահայտման, ոչ խոսքային հաղորդակցման և հույզերի դրսևորման միջոց:**

Երաժշտական թերապիայի կիրառումն ունի հետևյալ նպատակները՝

- խթանում է շարժողական ֆունկցիաները,
- շտկում և զարգացնում է զգայական ֆունկցիաներն ու հնարավորությունները,
- խթանում է խոսքի զարգացումը,
- կարգավորում է խոսքի տեմպը, ռիթմը, շեշտադրությունը, տեմբրը, արտահայտչականությունը:

### **Երեխաների մոտ արձանագրվել են հետևյալ արդյունքները.**

- երաժշտության միջոցով առավել հեշտ սկսել են ճանաչել սեփական անձը,
- սեփական մարմնի մասերը և դրանց ֆունկցիաները,
- ծանոթացել կենդանիներին ու նրանց արձակած ձայներին և այլն, սովորել են նոր պարզ երգեր,
- երեխաները սկսել են ճանաչել իրենց խմբում ընդգրկված մյուս երեխաներին, շփվել նրանց հետ, միմիանց լսելով կատարել տաարբեր փոքրիկ ստեղծագործություններ;
- սովորել են նաև ճանաչել տարբեր երաժշտական գործիքներ,

Այս ամենի արդյունքում տեղի է ունեցել ստացած գիտելիքների ընդհանրացում և պահպանում:

## **3. Արտթերապիայի հիմնական դրույթների կիրառումը աուտիզմ համախտանիշ ունեցող երեխաների համար:**

Արտ-թերապիայի հիմնական նպատակներն են՝

- զարգացնել ինքնակառավարման և ուշադրությունը կենտրոնացնելու կարողությունները,
- զարգացնել երևակայությունը, տարածական ընկալումը,
- ստեղծագործական գործունեությունը աուտիզմ ախտորոշում ունեցող երեխայի մոտ հարստացնում է սոցիալական միջավայրի հետ փոխազդեցության փորձը:

2019 թվականին ծրագրում ընդգրկված երեխաների մոտ արձանագրվել են հետևյալ արդյունքները.

- Երեխաները սիրով ներգրավվում են գույների աշխարհի, ընտրում գույներ, նկարում տարբեր պատկերներ,
- Հաճույքով աշխատում են կավով՝ ստեղծելով տարբեր իրեր,
- Աշխատում են հայելու դեմ և կարողանում են արդեն ճանաչել իրենց դեմքը, մարմնի մասերը,

- Արտթերապիայի շրջանակներում իրականացվել է բաց դաս-տիկնիկազործություն. մեր սաները սովորել են պատրաստել տիկնիկներ իրենց նախընտրած գույներով և հույզերով:

**4. Ինքնասպարկման, ինքնակառավարման և պատշաճ միջանձնային հարբերություններ հաստատելու հմտությունների ձևավորում և զարգացում:**

Օկուպացիոն թերապիայի հիմնական նպատակն է սովորոցնել երեխային ինքնուրույն կենցաղավարություն, հնարավորինս ինքնուրույն ներգրավվելու այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են տվյալ երեխայի համար և իմաստ են հաղորդում նրա կյանքին: Այն իր մեջ ներառում է՝

1. Չգայական ինտեգրում
2. Զբաղվածություններ
3. Կենցաղային հմտությունների ձեռքբերում. ինքնախնամք, գնումներ խանութից, ուտեստների պատրաստում
4. Ժամանց, պար, ռիթմիկա
5. Աշխատանքային հմտությունների ձեռքբերում
6. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրա

Ադապտիվ սպորտը թույլ է տալիս ունենալ կյանքի ամբողջականության, սեփական մարմնին տիրապետման և որոշակի դժվարությունների հաղթահարման զգացումներ: Ադապտիվ սպորտը նպաստում է հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրմանը հասարակական կյանքին, սոցիալական շփումների ընդլայնմանը:

Յուրաքանչյուր երեխայի համար իրականացվում է ֆունկցիոնալ գնահատում և հիմնվելով գնահատման արդյունքների վրա կազմվում է անհատական և խմբային ծրագրեր: Ադապտիվ սպորտը նպաստում է.

- սաների կողմից շարժական խաղերի ընթացքում կանոններին հետևմանը, խմբակիցների հետ վարժությունների կատարմանը, շարժումների կազմակերպմանն ու շարժողական հնարավորությունների ընդլայնմանը,
- խմբային աշխատանքի ժամանակ շեշտը դրվում է համագործակցության և թիմային աշխատանքի վրա՝ նպատակ ունենալով սաների մոտ զարգացնելու ինքնավստահության և խմբային պատկանելության զգացումը:
- ամռան ամիսներին իրականացվում են բակային պարապմունքներ/խաղեր:

**5. Ինքնուրույնության զարգացման ու հասարակության մեջ ինքնադրսևորման հմտությունների ձևավորման արդի մոդելը:**

Ծրագրի շրջանակներում իրականացվում է սոցիալ-հոգեբանական աշխատանք ծրագրում ընդգրկված երեխաների հետ, որի նպատակն է նրանց սոցիալականացումն ու ինտեգրումը հասարակության մեջ: Ինչպես նաև ծրագրի գերնպատակն է նպաստել երեխաների ինքնուրույնության զարգացմանն ու հասարակության մեջ ինքնադրսևորմանը:

Տարվա ընթացքում իրականացվել են հետևյալ ծրագրերը՝

- Այց «Սիթիգեն» մանուկների քաղաք
- Այց կենդանաբանական այգի
- Բացօթյա միջոցառում պղպջակներով-«Չգայական օր»
- Այց մանկական սրճարան
- Այց մանկական ժամանցային կենտրոն
- Այց թատրոն
- Այց թանգարան

**6.Ռեսուրսային դասարանի մոդելը աուտիզմ համախտանիշ ունեցող երեխաների համար:**

2008թ. կենտրոնը ներառական կրթական իր փորձնական մոդելը՝ որպես պիլոտային նախագիծ, ներդրեց Մորգենթաուի անվան №126 հիմնական ներառական դպրոցում:

2015 թվականից սկսեցինք համագործաբացել նաև թիվ 136 հիմնական դպրոցի հետ:

«Ռեսուրսային դասասենյակ»-ում անցկացնում ենք անհատական պարապունքներ՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ եւ, իհարկե, յուրաքանչյուր երեխային ցուցաբերվում է անհատական մոտեցում:

Հատկապես 1-3-րդ դասարանցիներին ցուցաբերվում է առանձնահատուկ մոտեցում: Նրանց դասարանում ուղեկցում են մեր թերապիստները: Մեր նպատակն է՝ աջակցել երեխաներին դպրոցական միջավայրում, հեշտացնել վերջիններիս ադապտացման փուլը: Աշխատանքը ծավալվում է միանգամից մի քանի ուղղություններով՝ աշխատանք աուտիզմ ունեցող երեխայի հետ եւ աշխատանք համադասարանցիների, դասավանդող ուսուցիչների ու ծնողների հետ:

2017թ. Մորգենթաուի անվան թիվ 126 հիմնական դպրոցում ստեղծվեց «Ռեսուրսային դասասենյակ» , որը հնարավորություն ընձեռեց տվյալ դպրոցում ուսանող աուտիզմ ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներն ավելի նպատակային դարձնել: Երեխաները ուսուցման պրոցեսի մի մասը անցկացնում են ռեսուրսային դասասենյակում, իսկ մնացած ժամանակը՝ համադասարանցիների հետ:

Տվյալ դասարանները համարվում են միջանցիկ հարթակ, որոնց նպատակն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ներգրավել և մասնակից դարձնել կրթական ընդհանուր գործընթացին:

Նպատակաուղղված եւ կրթական գործընթացի արդյունավետ իրականացման համար, մեր թիմը մեծ ուշադրություն է դարձնում՝

- Աշակերտի ակտիվությանը եւ մասնակցությանը դասապրոցեսին
- Դասապրոցեսի կանոններին ենթարկվելուն
- Ուսուցչի հրահանգները, հանձնարարությունները ըմբռնելուն, կատարելուն
- Աշխատելու տեմպին
- Ուշադրության կենտրոնացվածությանը
- Դասարանում աշակերտների հետ շփվելու, հաղորդակցվելու կարողությանը
- Երեխայիվարքին:

**7.Խորհրդատվությունների և դասընթացների կազմակերպում ու անցկացում աուտիզմ ունեցող երեխաների ծնողների և ոլորտում աշխատող մասնագետների հետ**  
Կենտրոնը իրականացնում է շարունակական վերապատրաստումներ և գործնական աշխատանքներ ծնողների և մասնագետների համար:

2019 թվականին կազմակերպվել են սեմինարներ ոլորտում աշխատող տարբեր մասնագետների համար հետևյալ թեմաներով՝

- Ի՞նչ է աուտիզմը
- Վարքի ֆունկցիոնալ վերլուծություն
- Խրախուսա՞նք թե պատիժ
- Վերբալ վարքի միջամտություն
- Բնական միջավայրում ուսուցում
- Ներառական կրթության առանձնահատկությունները, դրական փորձի շուրջ քննարկումներ
- Երաժշտաթերապիա: Կլինիկական երաժշտաթերապիայի հիմունքներ



- **VB-Mapp** գնահատման համակարգ (վերապատրաստվել են 2 մասնագետներ Ստեպանակերտից)
- Արտթերապիա- հույզերի հետ գործնական աշխատանք (ծնողների համար)
- Ռեսուրսային դասարանի դերը դպրոց հաճախող զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար-սեմինար ուսուցիչների համար